«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ» *ՕՐԱԹԵՐԹ*
25 ՄԱՅԻՍԻ 2016
ՈՐԵՎԷ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՏԱՐՅԱԼ ԼԻՆԵԼ

ԿԸՀ նախագահ ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԸ, որպես ապաքաղաքականացված պրոֆեսիոնալ կառույցի ղեկավար, որը պատասխանատու է ընտրությունների պատշաճ կազմակերպման եւ անցկացման համար, չի պատրաստվում քաղաքական գնահատական տալ Ընտրական օրենսգրքի նախագծին, բայց բյուջեի կատարողականի «իր բաժին» հաշվետվությունն ավարտելուց հետո հայտնվելով լրագրողների «շուրջկալում»՝ չկարողացավ խուսափել ընտրական նոր համակարգի հետ կապված հարցերից։

-Ընտրական օրենսգրքի նախագիծը երրորդ ընթերցմամբ դեռ չընդունված՝ ընդդիմադիր ուժերը խոսում են ԸՕ-ում փոփոխություններ իրականացնելու մասին։ Ինչպե՞ս եք վերաբերվում այդ հեռանկարին։

-Որեւէ փաստաթուղթ չի կարող կատարյալ լինել։ Միշտ կարելի է ցանկացած փաստաթղթում կատարել փոփոխություններ, նորամուծություններ, հաշվի առնելով նաեւ առկա հնարավորությունները՝ գտնել լավագույն լուծումներ, որոնք կբարելավեն գոյություն ունեցող համակարգը եւ առավելագույն վստահություն կներշնչեն հանրությանը։ Առավել եւս, որ Ընտրական օրենսգիրքը կարգավորում է հասարակական հարաբերությունները, որոնք անընդհատ գտնվում են զարգացման փուլում։

-Ասում եք՝ ԿԸՀ-ն ապաքաղաքական մարմին է, բայց ամեն ընտրությունից հետո առաջիններից մեկը դուք եք հայտնվում քաղաքական մեղադրանքների տարափի տակ։ Մասնավորապես ձեզ մեղադրում են ձայների հաշվառման արդյունքները «ոտքից գլուխ շուռ տալու» համար։ Այսինքն՝ դուք էլ անմասն չեք ընտրական գործընթացից։

-Իհարկե անմասն չենք եւ ներկայացնում ենք մեր իրավական դիրքորոշումները բոլոր մեղադրանքների վերաբերյալ։ Նման գնահատականներ տալուց առաջ պետք է հասկանալ, որ քվեարկության արդյունքների ամփոփումը իրականացվում է տեղամասային հանձնաժողովներում։

-Այսինքն՝ «թվանկարչությունը» կատարվում է մինչեւ քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ԿԸՀ հասնե՞լը։

-Եթե եղել են կեղծիքներ, բնականաբար միակ օղակը, որտեղ դա կարող է տեղի ունենալ, այն ընտրական հանձնաժողովն է, որտեղ ամփոփվում է քվեարկության արդյունքը։ Իսկ քվեարկության արդյունքը, նորից եմ ասում, հաշվառվում եւ արձանագրվում է համապատասխան տեղամասային հանձնաժողովում։

Դրանից հետո, եթե ՏԸՀ-ում արձանագրվել է մի թիվ, ԿԸՀ կայքում հայտնվել է մեկ այլ թիվ, այս պարագայում գործ ունենք բոլորովին այլ հանգամանքի հետ, որը միանշանակ առանձին քննության առարկա պետք է դառնա իրավասու մարմինների կողմից։

-Դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ընթացքում չարաշահումներ թույլ տված անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցները ինչպե՞ս կազդեն 2017թ. ընտրությունների վրա՝ հետ կպահե՞ն ընտրախախտներին նոր քաջագործություններից։

-Հանրաքվեից հետո, եթե չեմ սխալվում, չարաշահումների հետ կապված՝ 79 քրեական գործ հարուցվեց, այդ գործերով կայացվեցին դատական ակտեր։

Քրեական գործերի հարուցումը միանշանակ ոչ միայն պատժիչ նշանակություն ունի, այլեւ կանխարգելիչ, որովհետեւ ցանկացած պարագայում, եթե պոտենցիալ օրինախախտը ունի

համոզմունք, որ միանշանակ կրելու է անխուսափելի պատիժ, ինչին տվյալ պարագայում ականատես եղանք, բնականաբար սա չի կարող չունենալ կանխարգելիչ նշանակություն:

-Որպես ստորագրված ցուցակների հրապարակման այլընտրանք մեծամասնության կողմից առաջարկված եւ ամրագրված լուծումը՝ քվեարկությանը մասնակցած քաղաքացիների հերթական համարներով ցուցակները տպելու եւ ընտրական գործընթացի մասնակիցներին հատկացնելու մեխանիզմը, ձեր սրտո՞վ է:

-Իմ կարծիքը մնում է անփոփոխ՝ ստորագրված ցուցակների հրապարակումը պարունակում է քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտման տարրեր: Այսինքն՝ այդ ցուցակները չեն կարող հրապարակվել: Բայց ԸՕ նախագծում ամրագրվել են այնպիսի նոր մոտեցումներ եւ լուծումներ, որոնք, ըստ էության, հնարավորություն են տալիս տեղամասային կենտրոններից ստանալ լիարժեք տեղեկատվություն քվեարկությանը մասնակցած անձանց վերաբերյալ:

-Էլեկտրոնային գրանցման համակարգը, ձեր կարծիքով, լուծո՞ւմ է կրկնաքվեարկությունների դեմն առնելու խնդիրը:

-Նախագծում ամրագրված մոտեցումն այնպիսին է, որ բացի էլեկտրոնային համակարգի նույնականացման գործընթացից, կա նաեւ ընտրողների ցուցակների ինստիտուտ, կտրոնների ինստիտուտ, ինքնաասոնձվող դրոշմանիշերի ինստիտուտ: Սրանք այն փաստական հիմքերն են, որոնց համադրելիության արդյունքում կարելի է լիարժեք դատողություններ անել գործընթացի թափանցիկության մասին:

Մեխանիզմը, որ ամրագրված է ԸՕ նախագծում, նախատեսում է հետեւյալ ընթացակարգը. անձը գալիս է ընտրական տեղամաս, ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը, տեղամասում կա համապատասխան մասնագետ եւ տեխնիկական սարքավորում, որը նախապես պարունակում է տվյալ տեղամասում հաշվառված ընտրողների ցուցակը, եւ անձը հաստատող փաստաթուղթը ներմուծելով տվյալ սարքավորման մեջ, տալիս է համապատասխան ազդանշան՝ անձը տվյալ տեղամասում ընտրելու իրավունք ունի՞, թե՞ ոչ:

Եթե այո՝ քաղաքացին ներմուծում է իր մատնահետքը սարքավորման մեջ, որը տպում է համապատասխան կտրոն, այդ կտրոնով ստանում է քվեաթերթիկները, մոտենում քվեատուփին, իր նախընտրած քվեաթերթիկը դնում ծրարի մեջ, վրան կտրոնի փոխարեն փակցնում ինքնաասոնձվող դրոշմանիշ ու նետում քվեատուփի մեջ: Ինքնաասոնձվող դրոշմանիշերի թիվը պետք է համապատասխանի ստացված կտրոնների քանակին: Սրանք այն մեխանիզմներն են, որոնք հնարավորություն են տալիս վերահսկելու ամբողջ գործընթացը:

-Ընտրողների մատնահետքերը նախապես ներդրվելու են էլեկտրոնային գրանցման սարքի հիշողության մե՞ջ:

-Նախագծում ամրագրված տարբերակով, քաղաքացին իր մատնահետքը թողնում է տեղամասային կենտրոնում հենց քվեարկության ընթացքում: Ձեր ասածը այլ բան է ենթադրում՝ այդ դեպքում նախապես վերցնում են քաղաքացու բոլոր մատնահետքերը եւ ներբեռնում սարքի մեջ: Դա ավելի շատ կենսաչափական տվյալներով քվեարկության մոդելն է, երբ առկա է կենսաչափական տվյալ, եւ անձը նույնականացվում է՝ ներկայացնելով ոչ թե անձը հաստատող փաստաթուղթը, այլ կենսաչափական տվյալը:

Սա էլ է տարբերակ, բայց դրան անցնելուց առաջ պետք է մանրակրկիտ քննարկման առարկա դառնան բազմաթիվ խնդիրներ: Օրինակ՝ հնարավո՞ր է ունենալ մատնահետքերի այդ բազան, ինչպիսի ճշգրտությամբ պետք է լինեն այդ մատնահետքերը: Առանձին ուսումնասիրության առարկա պետք է դառնա սխալանքի հնարավորությունը:

Փորձը ցույց է տալիս, որ այստեղ 100 տոկոսանոց արդյունք հնարավոր չէ ակնկալել, որովհետեւ շատ դեպքերում մատնահետքի վատորակ լինելով պայմանավորված՝ սարքը չի

կարդում մատնադրոշմը։ Այս դեպքում պետք է լինեն քվեարկության իրավական այլ մեխանիզմներ։ Սա արդեն բոլորովին այլ ինստիտուցիոնալ մոտեցում է, քան այն, ինչը ներդրված է ԸՕ նախագծում։